

Փետրվարի 9, 2018 թ.

## ՄԱՄՈՒԼԻ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

### Մեկնարկել է «Կենգուրու 2018» միջազգային մաթեմատիկական մրցույթը

Մեկնարկել է «Կենգուրու 2018» միջազգային մաթեմատիկական մրցույթը, որն այս տարի **կանցկացվի մարտի 15-ին**: Մրցույթին մասնակցելու հրավեր է ուղարկվել է ՀՀ և Արցախի 1294 դպրոցի:

Մրցույթին կարող են մասնակցել 3-12-րդ դասարանների բոլոր ցանկացող աշակերտները: Մասնակցության վճարը կատարելու, վճարման անդորրագիրն իրենց դպրոց ներկայացնելու և դպրոցի մասնակից երեխաների ցուցակում գրանցվելու վերջնաժամկետը փետրվարի 16-ն է: Դպրոցները մասնակցության հայտը պետք է ներկայացնեն մինչև փետրվարի 21-ը ներառյալ:

«Այսօրվա աշխարհում ամուր մաթեմատիկական հիմքը և տրամաբանությունը խիստ կարևոր են ոչ միայն թեստերում լավ արդյունքներ գրանցելու կամ լավ համալսարաններ ընդունվելու, այլև երիտասարդների մտածելու և դատողություններ անելու կարողությունները խթանելու համար: «Կենգուրու» մրցույթը պարզապես մաթեմատիկայի մրցույթ չէ. այն ձգտում է զարգացնել հայ աշակերտների լայն մտածողությունն ու տրամաբանությունը՝ նպաստելով նրանց համընդհանուր զարգացմանը: Այդ իսկ պատճառով, անկախ մաթեմատիկայի իմացության մակարդակից, անկախ մաթեմատիկական ընդունակություններից, կոչ ենք անում մեր երեխաներին առանց վարանելու և առանց վախենալու մասնակցել մրցույթին», - ասել է «Այբ» կրթական հիմնադրամի դպրոցական մրցույթների բաժնի ղեկավար Շուշան Կարապետյանը՝ ավելացնելով, որ այս տարին հորեյանական է մրցույթի համար:

**«Այս տարի լրանում է «Կենգուրու» մրցույթի և մրցույթի շնորհիվ ՀՀ-ում և Արցախում ձևավորված յուրօրինակ ու հզոր մանկական շարժման 10 տարին**: Եվ մեզ համար անչափ ուրախալի է, որ այս տասնամյակում այն հասցրել է արձանագրել մեծ ձեռքբերում՝ դառնալ ՀՀ-ում և Արցախում ամենասիրված ու զանգվածային դպրոցական մրցույթը: Այս հորեյանական տարում մրցույթի մասնակից բոլոր դպրոցներին, որոնցում չեն արձանագրվի խախտումներ, սպասում են անակնկալներ», - նշել է Շուշան Կարապետյանը:

*«Կենգուրու» մրցույթի մասին*

*«Կենգուրու» միջազգային մաթեմատիկական մրցույթի բացառիկ կազմակերպիչն է [«Այբ» կրթական հիմնադրամը](#): Այն անցկացվում է Հայաստանում ՀՀ կրթության և գիտության, Արցախում ԱՀ կրթության, գիտության և սպորտի նախարարությունների հովանու ներքո:*

Հայաստանում մրցույթի կազմակերպման գործընկեր՝ [«ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ](#):

Տեղեկատվական հովանավորներ՝ [«Մեդիամարտ»](#) լրատվական գործակալություն և «Կրթություն» շաբաթաթերթ: